Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի «Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության նշանակման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն, ՀՀ Արագածոտնի մարզի «Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը
2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2.Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի պատճենը)
4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով
5) Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Շենավանի միջնակարգ դպրոցում 2021թ. սեպտեմբերի 30–ից մինչև հոկտեմբերի 20–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ և կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. նոյեմբերի 3-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Շենավան, 19 փողոց , 32 շենք:

Տեղեկությունների համար դիմել՝ Ն. Գալստյանին հեռ. 093093940, 077782245, էլ. հասցե՝ shenavan@schools.am